Պարույր Սևակ

Ութնյակներ

1

Սա մտածում է, որ ինքը՝ դանակ,
Աշխարհն էլ շատ է նման դմակի,
Բայց տանը, տեսե՛ք, ի՞նչ ձև է տալիս
Անստորագիր մի նոր նամակի.
«Այսինչ-այնինչը դմակ է ուտում
Եվ թշնամաբար չի էլ նկատում,
Որ այդ դմակը դիպել է մի օր
Մաքու անմաքուր կեղտոտ քամակին...»
2
Նրա ձեռքը բան չի ընկնում-
Եվ... չհավան է:
Սրա գլխում բան չի մնում-
Ամբարտավան է:
Տանտիրուհին անշնորհք է-
Միսն է այրել թեժ կրակին,
Մեղավորը ո՛չ թե ինքը,
Այլ... խեղճ թավան է:
3
Թե ասես. «Մատրս վարունգ է»,

Աղ կառնի ու մոտ կվազի,
Թե ասես. «Աչքրս դուրս եկավ»,
«Տուր տանեմ խեղճ կատվիս» կասի:
Բայց փորձիր հիմար գտնվել՝
Հունվարին մրսել ու հազալ,
Լեղաճաք կփախչի հեռու.
«Նման է թոքախտի հազի»:
4
Իսկ ա՛յս տիպը, հապա տեսեք.
Ձվի մեջ էլ մազ է փնտրում,
Ոչ թե աչքիդ... ակնոցի՛դ մեջ
Վտանգավոր խազ է փնտրում:
Թե սկսես. «Հնում լավ էր...»,
Հո չի հարցնի, թե ինչն էր լավ,-
Նույնիսկ կիսատ քո խոսքի մեջ
Իր դարն ապրած ֆազ է փնտրում...
5
Ձրի պատանք թե լինի՝
Ափալ-թափալ կմեռնի,
Ասես «ձուկ է», հավատա,
Օձ էլ լինի՝ կբռնի:
Եթե չունի ինքը շահ՝
Չի հասկանա ոչ մի բառ,
Եթե մեջը շահ ունի՝
Շան լեզուն էլ կրմբռնի:
6
Իսկ ինչո՞ւ, ինչի՞ համար
Այս մեկին ուշք չեք դարձնում.
Մի ասեղ պիտի առնի՝
Պողպատի փութն է հարցնում,

Իսկ կողքին թե մարդ չկա՝
Էլ ի՞նչ հարց - ի՞նչ պատասխան,-
Թե հավը ձեռքից թռավ՝
Անփետուր ճուտն է վերցնում:
7
Սա տուն չի շինել՝
Գիտի, թե սյունը տան մեջ է բուսել:
Նա, որ չի վազել՝
Անցնե՞լ է ուզում, ոչ միայն հասնել:
-Խոսելը հեշտ է, հոսե՞լն է դժվար-
Հո՛ւն է հարկավոր,
Սյունը չի բուսնի,
Ինչքան էլ գոռաս.
«Տո՞ւն է հարկավոր»:
8
Սա, թե տեղն եկավ՝
Աջով գրածը ձախով կջնջի,
Սա, թե նեղն ընկավ՝
Մոր սիրողին էլ «հայրիկ» կկանչի,
Սա, թե բեղը կա՝
Միրուք կսարքի մազից էլ ձկան...
Ճիշտ է, դեղը կա,
Սակայն այս ցեղը բուժելու բան չի:
9
Ականջովը մեկ
Թթու բան չարժե,
Կարծում է՝ պիտի
Եվ լեռներ շարժե,
Իսկ լեռներն, ինչ խոսք,
Չեն շարժվում տեղից,-

Նա կարող է լոկ
Աթոռներ շարժել:
10
Այս տի՞պը: Քո տանը լակում՝
Ուրիշի դռանն է հաչում,
Ուտում է իր կուտն ա՛յս բակում՝
Ձուն ածում է մեկ ուրիշ քուչում:
Դու, ի՞նչ է, չգիտես ինչո՞ւ:
Զգայուն առագաստ ունի.
Հասկանում, զգում է իսկույն,
Թե քամին ո՛ր կողմն է փչում: